ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՈՐԾՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ *

ՀՏԴ 342.9 *DOI: 10.52063/25792652-2025.1.24-62*

ԱՐԿԱԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«ԳԱՀ Փարթներս» փաստաբանական ընկերության
գլխավոր իրավախորհրդատու-փաստաբան,
Գորիսի պետական համալսարանի ռեկտորի խորհրդական,
նույն համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
բանասիրության և պատմահրավագիտության ամբիոնի դասախոս,
ք. Սիսիան, Հայաստանի Հանրապետություն
arkadi_hov@mail.ru
ORCID: 0009-0002-4823-6613

Հոդվածի նպատակն է ներկայացնել վարչական ակտի ուժի մեջ մտնելու իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և համեմատել դրանք որոշ արտասահմանյան իրավական համակարգերի կարգավորումների հետ՝ առաջարկելով բարեփոխման հնարավոր ուղիներ:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ բացահայտել Հայաստանի օրենսդրության մեջ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահի շուրջ միանշանակության բացակայությունը, որի խնդիրն ի հայտ է եկել դատական պրակտիկայում, համեմատել արտասահմանյան փորձը և առաջարկել բարեփոխումներ այդ ոլորտում:

Ուսումնասիրության ընթացքում վիճարկվել է վարչական ակտի ծանուցման ձևերը և դրա հստակ պահի բացակայության հանգամանքը մեր օրենսդրության մեջ, հետևաբար՝ բարձրացված իրավական խնդիրների շրջանակում առաջ են քաշվել հետևյալ հարցերը՝

1. Ի՞նչ բացեր և առավելություններ ունեն համակարգերը.

2. Ի՞նչը կարող է կիրառվել ՀՀ օրենսդրության բարելավման համար:

Աշխատանքի ընթացքում հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է դոգմատիկ իրավական վերլուծության, համեմատական իրավագիտության և դատական պրակտիկայի ուսումնասիրության վրա:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հանգել եմ այն եզրակացության, որ՝

1. Հայաստանում դեռևս բացակայում է միանշանակություն՝ ակտի ուժի մեջ մտնելու պահի շուրջ, ինչը կարող է վնասել իրավական կանխատեսելիությունը և քաղաքացիների պաշտպանությունը:

2. Գերմանիան և Ֆրանսիան հստակ իրավակարգավորումներ ունեն, որոնք ապահովում են ակտի ուժի մեջ մտնելու հստակ և կանխատեսելի մեխանիզմներ:

3. Լիտվան, լինելով ԵՄ անդամ, զարգացրել է թվայնացված վարչարարության մեխանիզմներ, որտեղ էլեկտրոնային ծանուցումը լիարժեք իրավական ուժ ունի:

* Հոդվածը ներկայացվել է 14.02.2025թ., գրախոսվել՝ 10.04.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Հիմնաբառեր՝ *վարչական ակտ, վարչական ակտի հասցեատեր, վարչական ակտի ուժի մեջ մտնել, միանշանակություն, էլեկտրոնային ծանուցում, վարչական ակտի գոյության մասին տեղեկանալ, դատավարական ժամկետներ, վարչական ակտի իրազեկում, վարչական ակտը հանձնել:*

Ներածություն

Վարչական իրավունքի արդյունավետ կիրառման և իրավական կանխատեսելիության ապահովման առումով էական նշանակություն ունի վարչական ակտի իրավաբանական ուժի մեջ մտնելու հստակ պահի սահմանումը:

Ակտի ուժի մեջ մտնելը ոչ միայն կանխորոշում է վարչական մարմնի կամարտահայտության պարտադիր ուժն ու կիրառելիությունը, այլ նաև սահմանում է անհատի իրավունքների և պարտավորությունների ծագման սկիզբը: Սույն գործընթացի իրավական կարգավորումը պահանջում է հստակություն և միանշանակություն թե՛ նորմատիվ կարգավիճակում, թե՛ դատական պրակտիկայում: Հայաստանի գործող օրենսդրության մեջ՝ մասնավորապես վարչական դատավարության օրենսգրքում, բացակայում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահի հստակ սահմանում, ինչն առաջացնում է մի շարք պրակտիկ և տեսական խնդիրներ՝ մասնավորապես ակտերի բողոքարկելիության, ժամկետների հաշվարկման և կասեցման ինստիտուտների համատեքստում: Ավելին՝ արդի վարչական դատավարական պրակտիկան հաճախ բախվում է այն խնդրին, երբ ակտը չի ծանուցվել պատշաճ կարգով, սակայն այն կիրառվում է՝ առաջացնելով իրավական անորոշություն և խախտելով իրավունքի գերակայության և վստահության սկզբունքները:

Համեմատական վերլուծությունը, մասնավորապես՝ Գերմանիայի, Ֆրանսիայի և Լիտվայի օրենսդրության և վարչարարության փորձի հիման վրա, հնարավորություն է տալիս վեր հանելու առավել հստակ, արդյունավետ և կանխատեսելի լուծումներ, որոնք կարող են կիրառելի լինել նաև Հայաստանի իրավական համակարգի բարելավման գործում:

Ուսումնասիրության նպատակն է վերլուծել վարչական ակտի ուժի մեջ մտնելու իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և համեմատել դրանք որոշ արտասահմանյան իրավական համակարգերի կարգավորումների հետ՝ առաջարկելով բարեփոխման հնարավոր ուղիներ:

Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է դոգմատիկ իրավական վերլուծության, համեմատական իրավագիտության և դատական պրակտիկայի ուսումնասիրության վրա:

Վարչական ակտի ուժի մեջ մտնելու հիմնախնդիրները Հայաստանում

Վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական համակարգում ուղղակիորեն կապվում է ակտի ծանուցման գործընթացի հետ: Չնայած այն հանգամանքին, որ գործող վարչական դատավարության օրենսգիրքը (ՎԴՕ) սահմանում է վարչական ակտի բողոքարկման կարգն ու ժամկետները՝ ելնելով ծանուցման պահից, ակտի ուժի մեջ մտնելու կոնկրետ պահի մասին ուղղակի իրավական կարգավորում օրենսգրքում առկա չէ:

Իրավական կարգավորումների ընդհանուր տեսությունը

ՎԴՕ 72-րդ հոդվածը սահմանում է վարչական ակտերի բողոքարկման ժամկետները, այլ ոչ թե ակտի ուժի մեջ մտնելու պահը: ՀՀ իրավակարգավորումներում հաճախ կիրառվում է այն մոտեցումը, թե վարչական

ակտը իրավաբանական ուժ է ստանում միայն պատշաճ ծանուցումից հետո: Սակայն «պատշաճ ծանուցման» իրավաչափ մեկնաբանությունը և իրավական հետևանքները չեն ունենում միանշանակ կիրառում:

Օրինակ՝ վարչական դատարանի որոշ պրակտիկ որոշումներում արձանագրվել է, որ եթե վարչական ակտը չի ծանուցվել անձին պատշաճ կարգով, այն չի կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ: Այդուհանդերձ, այլ դեպքերում դատարանը մեկնաբանել է, որ վարչական ակտն ուժի մեջ է մտնում դրա ընդունման պահից կամ փաստացի կիրառումից՝ անկախ ծանուցման կարգից:

Պրակտիկ խնդիրներ

Այս բազմազան մոտեցումները բերում են մի շարք պրակտիկ հիմնախնդիրների.

1) **Անորոշություն իրավական հետևանքների վերաբերյալ:** Եթե անձը տեղեկացված չէ ակտի մասին, սակայն այն կիրառվում է, խախտվում է տեղեկացված լինելու և իրավունքի պաշտպանության հնարավորության սկզբունքը:

2) **Ժամկետների հաշվարկման խնդրահարույց լինելը:** ՎԴՕ-ն նախատեսում է բողոքարկման որոշակի ժամկետներ, որոնք սկսվում են ծանուցման պահից: Սակայն ծանուցման բացակայության դեպքում ժամկետների հաշվարկը դառնում է վիճահարույց:

3) **Ծանուցման եղանակների բացակայությունը:** Օրենսդրությամբ հստակեցված չէ՝ արդյո՞ք կարելի է վարչական ակտը ծանուցել էլեկտրոնային եղանակով, բանավոր կերպով, թե՞ միայն գրավոր: Այդ բացը տարբեր վարչական մարմիններ մեկնաբանում են ըստ սեփական հայեցողության:

Դատական պրակտիկայում հանդիպող խնդիրներ

Վարչական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով, որի համաձայն՝ վարչական ակտն օրինական ուժի մեջ է մտնում դրա հասցեատիրոջն այդ վարչական ակտի մասին ծանուցելու հաջորդ օրը, որից հետո սկսում է հոսել այդ վարչական ակտի բողոքարկման համար սահմանված երկամսյա դատավարական ժամկետը: Իսկ այդ ժամկետի ավարտից հետո վարչական ակտը դառնում է անբողոքարկելի:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ դատավարական ժամկետի հաշվարկը պետք է իրականացվի վարչական ակտը ստանալու պահից սկսած, այլ ոչ թե այն իրազեկվելու պահից:

Այս համատեքստում կարևոր է ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ, գրավոր վարչական ակտի իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար անհրաժեշտ է նաև, որ օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունմամբ, այլ այդ ակտի օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու հետ:

Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, գտնում է, որ վարչական ակտի վիճարկման պարագայում անձի՝ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ վարչական ակտի հասցեատերը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ վարչական ակտի ընդունման

մասին, այլ խոսքով՝ օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո (ՀՀ Վճռաբեկ դատարան, թիվՎԴ/2499/05/14 գործով որոշում):

Վճռաբեկ դատարանի և օրենսդրական իրավակարգավորումների համեմատական ուսումնասիրության լույսի ներքո գտնում ենք, որ վարչական ակտը ստանալու պահից է ուժի մեջ մտնում վարչական ակտը, հետևաբար՝ որևէ նշանակություն ունենալ չի կարող, թե վարչական ակտի հասցեատերը երբ է տեղեկացված եղել իր նկատմամբ կայացված որոշման մասին: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերը կատարված վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի մասին տեղեկանալը չի կրում զուտ այդ ակտի գոյության մասին տեղեկանալու բնույթ, այլ պայմանավորված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների համաձայն վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելու և դրա ուժի մեջ մտնելու հետ:

Արդյունքում գտնում ենք, որ սույն դեպքում հայցվորը վիճարկվող ակտը ստանալուց հետո սահմանված երկամսյա ժամկետում հայց է հարուցել Դատարանում, որպիսի պայմաններում հայցվորը վարչական ակտի գոյության մասին տեղեկանալու հիմքով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու պարտավորություն չունի:

Վարչական ակտի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դատական պրակտիկայում նույն դատարանի կողմից երկու տարբեր մոտեցումներ կան, մասնավորապես՝ թիվ ՎԴ1/0019/05/23 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ արձանագրել է, որ փաստացի տեղեկանալու պահից է վարչական ակտը մտնում ուժի մեջ, հետևաբար հայցվորը, առնվազն 22.04.2021 թվականից փաստացի տեղեկացված լինելով իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին և իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանություն չհայցելու հանգամանքը կապելով վարչական մարմնի անգործության հետ՝ այն հաշվառմամբ, որ իրեն չի հանձնել վիճարկվող վարչական ակտը, չի կարող հանդիսանալ օրենքով նախատեսված դատավարական ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ, քանի որ նախ՝ հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ հիմնավոր ապացույց, որ ինքը 22.04.2021 թվականից սկսած արել է իրենից կախված ամեն ինչ իր դատական պաշտպանության իրավունքը իրացնելու համար, սակայն դա հնարավոր չի եղել իրացնել՝ հայցվորի կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, երկրորդ՝ ողջամտորեն ընդունելի համարվել չի կարող այն մոտեցումը, որ, տեղեկացված լինելով վարչական ակտի մասին, հայցվորը վարչական ակտը ստանալու կապակցությամբ միջոցներ է ձեռնարկել միայն 22.12.2022 թվականին, այսինքն՝ վարչական ակտի մասին տեղեկացված լինելու պահից սկսած մոտ 1 տարի 8 ամիս անց: Այլ կերպ ասած՝ տվյալ պարագայում, ստացվում է այնպես, որ հայցվորը, առնվազն 22.04.2021 թվականից տեղեկացված լինելով վարչական ակտի մասին, մոտ 1 տարի 8 ամիս դրսևորել է անգործություն՝ միջոցներ չձեռնարկելով իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանությանն ուղղված (Դատալեքս, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ1/0019/05/23 վարչական գործով 02. 09. 2024թ. որոշումը):

Նույն գործով մեկ այլ դատավորի կազմով 14. 04. 2023թվականի որոշմամբ հայտնել է դիրքորոշում այն մասին, որ վիճարկվող ակտը հայցվորը ստացել է 22.12.2022 թվականին, որպիսի պայմաններում որևէ նշանակություն ունենալ չի կարող, թե հայցվորը երբ է տեղեկացված եղել իր նկատմամբ կայացված որոշման մասին: Ընդ որում, ՀՀ Վճռաբեկ դատարանի վերը կատարված վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի մասին տեղեկանալը չի կրում զուտ այդ ակտի գոյության մասին տեղեկանալու բնույթ, այլ պայմանավորված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների

համաձայն վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելու և դրա ուժի մեջ մտնելու հետ:

Արդյունքում վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ սույն դեպքում հայցվորը վիճարկվող հրամանը ստանալուց հետո սահմանված երկամսյա ժամկետում հայց է հարուցել Դատարանում, որպիսի պայմաններում հայցվորը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու պարտավորություն չուներ (Դատալեքս, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ1/0019/05/23 վարչական գործով 04. 05. 2023թ. որոշում):

Հարկ եմ համարում ընդգծել նաև, որ ՀՀ ընդհանուր վարչական իրավունք ուսումնական ձեռնարկում հեղինակները (Թովմասյան, Հրայր., Լուխթերհանդթ, Օլաֆ., Մուրադյան, Գուրգեն., Պողոսյան, Վիգեն., Ռայմերս, Վոլֆգանգ., Ռուզել, Ռենատ.) վարչական ակտի ուժի մեջ մտնելու վերաբերյալ տվել են մեկնաբանություն այն մասին, որ վարչական ակտի ընդունումը դեռևս բավարար չէ, որպեսզի այն ի հայտ գա Հայաստանի Հանրապետության իրավակարգում, այլ խոսքով՝ իր գոյությունը փաստի ընդունող վարչական մարմնից դուրս: Դրա համար անհրաժեշտ է, որ վարչական ակտը ուժի մեջ մտնի: Վարչական ակտն ուժի մեջ է մտնում , որպես կանոն, ակտի ընդունման մասին հասցեատերերին իրազեկելուն հաջորդող օրվանից, որի օրենսդրական հիմքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասն է:

Իսկ վարչական ակտի ընդունման մասին իրազեկումը կատարվում է հիմնականում այն հասցեատիրոջը հանձնելու եղանակով, որի օրենսդրական հիմքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասն է: Այս կանոնը վերաբերում է գրավոր վարչական ակտերին, որոնք վարչական ակտի հիմնական ձևն են (Թովմասյան, Լուխթերհանդթ, Մուրադյան, Պողոսյան, Ռայմերս, Ռուզել 2011):

Այս տարբերակված մոտեցումները վկայում են իրավական անվտանգության պակասի և օրենսդրական բացի մասին:

Որոշ արտասահմանյան երկրների փորձը վարչական ակտի ուժի մեջ մտնելու կարգավորման ոլորտում

Իրավական համեմատական վերլուծությունն ուղղված է վարչական ակտի ուժի մեջ մտնելու գործընթացի տարբեր մոտեցումների բացահայտմանը: Որոշ զարգացած իրավական համակարգեր՝ ինչպիսիք են Գերմանիան, Ֆրանսիան և Լիտվան, ապահովում են բարձր աստիճանի հստակություն այս հարցում՝ հիմնվելով օրենսդրական հստակ կարգավորումների և կայուն իրավաբանական պրակտիկայի վրա: Այսպես. Գերմանիայում վարչական ակտերի ընդունումը և ուժի մեջ մտնելը կարգավորվում է Վարչական ընթացակարգի մասին օրենքով (Verwaltungsverfahrensgesetz 2023)**:** Օրենքի §43 հոդվածը սահմանում է, որ վարչական ակտն ուժի մեջ է մտնում այն պահին, երբ այն պատշաճ կերպով ծանուցվում է հասցեատիրոջը.

„Ein Verwaltungsakt wird gegenüber demjenigen, für den er bestimmt ist oder der von ihm betroffen wird, in dem Zeitpunkt wirksam, in dem er ihm bekannt gegeben wird.“(§43 Abs. 1 VwVfG):

Այս մոտեցումն ընդգծում է անձի տեղեկացված լինելու իրավունքի առաջնայնությունը: Ծանուցման բացակայության դեպքում ակտը իրավական ուժ չի ստանում: Բացի այդ, Գերմանիայում կիրառվում են թվայնացված ծանուցման հարթակներ, որոնց միջոցով ֆիքսվում է ծանուցման օրն ու ժամը՝ իրավաբանական հետևանքների հաշվարկման համար:

Նման մոտեցումը թույլ է տալիս կանխել իրավական անորոշությունը և ապահովել նախադեպային կայունություն:

Ֆրանսիական վարչական իրավունքում վարչական ակտերի ուժի մեջ մտնելու պահը կապվում է **պաշտոնական հրապարակման** կամ **անհատական ծանուցման** հետ՝ կախված ակտի բնույթից: Ընդհանուր կանոնը բխում է **Վարչական արդարադատության օրենսգրքից (Code de justice administrative)** և **վարչական պրակտիկայից**:

Եթե ակտը ունի ընդհանուր նշանակություն (օրինակ՝ կարգադրություն կամ հրաման), այն ուժի մեջ է մտնում միայն **Journal Officiel**-ում հրապարակվելուց հետո: Անհատական նշանակության ակտերի դեպքում՝ օրինակ՝ լիցենզիայի տրամադրում կամ տույժի նշանակում, ակտը ուժի մեջ է մտնում անձի ծանուցումից հետո:

Ֆրանսիայի մոդելը կարևորում է հրապարակայնության և թափանցիկության սկզբունքը, իսկ ծանուցման ձևերը խստորեն կարգավորված են իրավական ակտերով:

Լիտվայի վարչական իրավունքը վերջին տարիներին ենթարկվել է թվայնացման, ինչի արդյունքում վարչական ակտերի ուժի մեջ մտնելու կարգավորման հիմքը դարձել է **ծանուցման փաստացի կատարումը՝** էլեկտրոնային կամ թղթային եղանակով:

Ըստ **Վարչական վարույթի մասին օրենքի՝ (Law on Administrative Proceedings)՝**

«Ակտը ուժի մեջ է մտնում անձի ծանուցման պահից՝ անկախ նրանից, թե արդյո՞ք նա ծանոթացել է բովանդակությանը»:

Լիտվայում կիրառվում է **E-government Gateway** թվային հարթակը, որի միջոցով վարչական մարմինները իրականացնում են ակտերի ավտոմատ ծանուցում և գրանցում՝ իրավական ուժի մեջ մտնելու պահի ճշգրիտ վավերացման նպատակով:

Այս փորձերը ցույց են տալիս, որ վարչական ակտի ուժի մեջ մտնելու հարցում իրավական հստակությունը, թվայնացումը և ծանուցման պատշաճ համակարգը ապահովում են իրավունքի կանխատեսելիություն և կանխում են հետագա վեճերը:

Հայ և արտասահմանյան գիտական դիրքորոշումները վարչական ակտի ուժի մեջ մտնելու վերաբերյալ

Վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը վարչական իրավունքի տեսական և գործնական հիմնախնդիրներից է, որն անմիջական ազդեցություն ունի ինչպես անձանց իրավունքների և պարտականությունների վրա, այնպես էլ վարչական ակտերի բողոքարկման և կատարման գործընթացների արդյունավետության վրա: Հետազոտական հետաքրքրության առարկա է նաև այն հարցը, թե որ պահից է վարչական ակտն ուժի մեջ մտնում՝ ընդունմա՞ն, հրապարակմ՞ան, թե՞ հասցեատիրոջը պատշաճ ծանուցման պահից: Այս հարցի շուրջ տարբեր իրավական համակարգերում ձևավորվել են տարբեր մոտեցումներ, որոնք ներկայացվում են ստորև:

Հայ գիտնականների դիրքորոշումները

Հայաստանյան իրավագիտական մտքի շրջանակներում առավելապես գերակշռում է այն մոտեցումը, ըստ որի՝ վարչական ակտն ուժի մեջ է մտնում դրա հասցեատիրոջը պատշաճ ծանուցման պահից: Մասնավորապես՝ Գ. Հարությունյանը և Ե. Խունդկարյանը դիտարկում են, որ ուժի մեջ մտնելու պահը պետք է կապել անձի իրազեկվածության հետ՝ իրավական կանխատեսելիության և իրավունքի պաշտպանության երաշխավորման տեսանկյունից: Նրանց գնահատմամբ՝ առանց այդ իրազեկման անհնար է ակտի հիման վրա առաջացած իրավական

հարաբերությունների ողջամիտ կարգավորումը (Հարությունյան, Խունդկարյան, 2015):

Դ. Հարությունյանը շեշտադրում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու և դրա իրավական հետևանքների կիրառման միջև եղած տարբերությունը՝ նշելով, որ առաջինը պայմանավորում է ակտի գործողության մեկնարկը, իսկ երկրորդը՝ դրա իրագործումը: Այս մոտեցումն ունի պրակտիկ նշանակություն՝ հատկապես բողոքարկման ժամկետների հաշվարկման հարցում (Հարությունյան 45–56):

Սեդա Ադամյանը, ուսումնասիրելով վերաքննիչ վարչական ակտերի ուժի մեջ մտնելու ընթացակարգերը, առանձնացնում է նաև այն դեպքերը, երբ ակտը կարող է ուժի մեջ մտնել դրա հրապարակման կամ վավերացման պահից, մասնավորապես՝ եթե ակտը չի հասցեագրվում կոնկրետ անձի (Ադամյան 2022):

Պրոֆեսոր Գևորգ Դանիելյանը վարչական ակտն ընդունված համարելու ժամկետը պայմանավորում է դրա տեսակով և ձևով: Այսպես՝ գրավոր վարչական ակտը համարվում է ընդունված՝ իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից, իսկ բանավոր կամ այլ ձևի վարչական ակտը՝ այդ ակտերը հրապարակվելու պահից (Օրենքի 58-րդ հոդված): Բանավոր վարչական ակտի պարագայում հրապարակման տակ չպետք է հասկանալ վերջինիս հրատարակումը տպագիր եղանակով, հրապարակումը սոսկ որևէ հստակ ընկալելի եղանակով հասցեատիրոջը հասանելի դարձնելն է (օրինակ՝ ոստիկանի կողմից սահմանված կարգով արված ժեստերը, լուսացույցի համապատասխան նշանի ակտիվացումը և այլն): Վարչական ակտի մասին իրազեկելու մասին նշել է, որ Օրենքի 59-րդ հոդվածի համաձայն, վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է համարվում վարչական մարմնի կողմից վարույթի մասնակիցներին այդ հոդվածով նախատեսված կարգով այն հանձնելը կամ հրապարակելը: Գրավոր վարչական ակտը պետք է եռօրյա ժամկետում ստորագրությամբ առձեռն հանձնվի վարույթի մասնակիցներին, իսկ դրա անհնարինության դեպքում, ինչպես նաև վարույթի մասնակցի պահանջով նույն ժամկետում հանձնումը կարող է իրականացվել պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ օրենքով նախատեսված այլ եղանակներով: Վարչական մարմինը միաժամանակ պարտավոր է դրա հետ միասին հանձնել նաև այդ ակտի բաղկացուցիչ մաս համարվող փաստաթղթերը, սակայն դրանք ուշացումով հանձնելը հիմք չէ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկելու համար: Հանձնման նշված կարգը տարածվում է նաև վարչական ակտում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող փաստաթղթերում կատարվող փոփոխությունների վրա: Ինչ վերաբերում է վարչական ակտի հրապարակմանը, ապա այն կատարվում է տվյալ վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով: Գրավոր վարչական ակտի հրապարակումը պարտադիր է, եթե վարչական մարմնին հայտնի չէ այն անձանց վերաբերյալ տեղեկությունները, որոնց շահերը ուղղակիորեն շոշափվում են այդ ակտով կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Գրավոր վարչական ակտը վարչական մարմնի նախաձեռնությամբ կարող է հրապարակվել, եթե վերջինիս հայեցողական որոշմամբ դա նպատակահարմար է՝ պետության և հանրության շահերի, ինչպես նաև անձանց իրավունքների արդյունավետ պահպանման անհրաժեշտությունից ելնելով: Մամուլում, ՁԼՄ-ներում կամ տեղեկատվության տարածման այլ միջոցներում հրապարակվում է գրավոր վարչական ակտի միայն եզրափակիչ մասը, սակայն միաժամանակ պետք է նշվի, թե որտեղ է հնարավոր ծանոթանալ ամբողջ վարչական ակտին: Օրենսդրի այս պահանջը, իհարկե, չի բացառում վարչական ակտն ամբողջությամբ հրապարակելու տարբերակը, մանավանդ՝ վերջինիս ոչ մեծ ծավալի դեպքում: Բանավոր վարչական ակտը հրապարակվում է այն հասցեատիրոջը բանավոր ձևով հայտարարելու միջոցով: Այն կարող է հրապարակվել նաև հասցեատիրոջ համար հասկանալի որևէ օտար լեզվով: Այլ ձևի վարչական ակտի հրապարկմանն արդեն անդրադարձել ենք:

Վարչական ակտի տրամադրումն օտար լեզվով. Վարչական ակտն օտար լեզվով իրազեկելու կարգն ամրագրված է Օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասով: Մասնավորապես՝ հասցեատիրոջ խնդրանքով վարչական մարմինը կարող է տրամադրել իր պաշտոնական կնիքով հաստատված օտար լեզվով թարգմանված պատճենը: Միաժամանակ, օրենսդիրն իրավաբանական ուժ է վերապահում բացառապես վարույթի իրականացման լեզվով ընդունված տեքստին, վեճ կամ բողոք ներկայացնելու դեպքում հիմք է ընդունվում միայն հայերենով ընդունված տեքստը: Օտար լեզվով թարգմանված պատճենը չի կարող հիմք լինել այդ ակտի իմաստը կամ բովանդակությունը մեկնաբանելու կամ պարզաբանելու համար: Օտար լեզվով թարգմանված պատճենները գործնականում կարող են անհրաժեշտ լինել տարբեր նկատառումներով, օրինակ՝ ամուսնության մեջ չգտնվելու մասին թարգմանված տեղեկանքը հիմք է այլ երկրում սահմանված կարգով ամուսնություն գրանցելու համար, այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու համար ևս պահանջվում է ներկայացնել տարաբնույթ տեղեկանքներ և այլն: Որպես կանոն, օտար լեզվով թարգմանված պատճենների անհրաժեշտությունը չի ծագում միջազգային պայմանագրերով նախատեսված հատուկ դեպքերում:

Վարչական ակտի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը. Վարչական ակտի ուժի մեջ մտնելու հարցում իրավական նշանակություն ունի ակտի իրազեկման ինստիտուտը: Այսպես՝ Օրենքի 60-րդ հոդվածի համաձայն, վարչական ակտն ուժի մեջ է մտնում վերը նշված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ կարգ նախատեսված չէ: Օրենսդիրը՝ իրավական ուժի մեջ մտնելու տեսանկյունից սահմանում է նաև, այսպես կոչված, «պայմանով ակտ», որի որոշ դրույթներ կարող են ուժի մեջ մտնել միայն որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման դեպքում: Ինչ վերաբերում է բանավոր և այլ ձևի վարչական ակտերին, ապա դրանք ուժի մեջ են մտնում այդ ակտերը հրապարակելու պահից: Ի դեպ, Օրենքի՝ անհատական ակտի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթները համապատասխանում են նույն հարցի իրավական կարգավորմանը նվիրված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին: Պարզապես, հարկ է նկատել, որ հրապարակման ոչ ենթակա իրավական ակտերի ուժի մեջ մտնելու առնչությամբ արդեն հարկ է ղեկավարվել այդ օրենքի 23-րդ հոդվածի 7-ր մասի պահանջներով: Մասնավորապես, այդպիսիք են համարվում այն իրավական ակտերը կամ դրանց առանձին մասերը, որոնք պարունակում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք: Հրապարակման ոչ ենթակա ակտերն ուժի մեջ են մտնում դրանց ընդունմանը հաջորդող օրվանից, իսկ ստորագրման կամ վավերացման կամ պետական գրանցման ենթակա իրավական ակտերը՝ դրանց ստորագրմանը կամ վավերացմանը կամ պետական գրանցմանը հաջորդող օրվանից: Հիշյալ ակտերը պարտադիր են կատարման համար իրավաբանական, ֆիզիկական և պաշտոնատար անձանց համար՝ նախատեսված կարգով դրանց մասին նրանց իրազեկելու կամ ծանոթացնելու պահից, եթե այդ իրավական ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Նշված ակտի հերթական համարի վերջում՝ իրավական ակտի բնույթը սահմանող տառից հետո, իրավական ակտն ընդունող մարմնի կողմից դրվում են «Գ» կամ «ՀԳ» կամ «ՀԿ» տառերը: Վարչական ակտերը գործում են անորոշ կամ որոշակի ժամկետով: Անորոշ ժամկետով ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ որևէ իրավասչափ հիմքով չի կորցրել իրավական ուժը (օրինակ՝ փոխարինվել է այլ վարչական ակտով, անվավեր է ճանաչվել և այլն): Որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև այդ ակտով նախատեսված ժամկետի լրանալը, սակայն այդ ակտի ժամկետը, մինչև նշված ժամկետի լրանալը կամ լրանալուց հետո 15 օրվա ընթացքում կարող է երկարաձգվել նոր ժամկետով կամ անորոշ ժամկետով: «Պայմանով ակտ» տերմինը օրենսդիրն օգտագործում է նաև վարչական ակտի գործողության մեջ գտնվելու հիմքի տեսանկյունից: Այսպես՝ եթե վարչական ակտի

ուժի մեջ մնալը փոխկապակցվում է որոշակի պայմանի հետ, ապա դրա կատարման պահին ավարտվում է նաև վարչական ակտի գործողության մեջ գտնվելու ժամկետը: Բանավոր ակտի դեպքում գործողության մեջ գտնվելն ավարտվում է այդ ակտի հետ կապված գործողությունների կատարմամբ կամ օրենքով նախատեսված որևէ եղանակով ակտի հասցեատիրոջը այդ մասին հայտարարելու պահից: Այլ ձևի վարչական ակտի գործողությունը դադարում է ակտի հասցեատիրոջը օրենքով նախատեսված տեսանելի, լսելի կամ որևէ այլ ձևով հասանելի եղանակով ակտի գործողությունը դադարելու մասին հայտնելու պահից (Դանիելյան 92–96):

Արտասահմանյան գիտական մոտեցումները

Գերմանական վարչական իրավունքում վարչական ակտի ուժի մեջ մտնելու վերաբերյալ ձևավորված դիրքորոշումներն առանձնանում են բարձր կարգավորվածությամբ: Ըստ Verwaltungsverfahrensgesetz (VwVfG) օրենքի §43 հոդվածի, վարչական ակտն ուժի մեջ է մտնում դրա հասցեատիրոջը պատշաճ ծանուցման պահից: Հ. Մաուրերը և Բ. Շմիթը, մեկնաբանելով այս դրույթը, ընդգծում են, որ առանց ծանուցման իրավական պարտավորություններ չեն կարող առաջանալ, իսկ վարչական մարմինը չի կարող ակտն իրականացնել՝ առանց դրա ուժի մեջ մտնելու (Maurer Հարթմուտ, Hartmut 2011):

Ֆրանսիական վարչական իրավունքում գիտնականները՝ այդ թվում Մարսել Վեդելը և Պատրիկ Դելվոլվեն, առաջարկում են տարբերակել նորմատիվ և անհատական ակտերը՝ ուժի մեջ մտնելու պահի տեսակետից: Առաջիններն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, իսկ վերջինները՝ հասցեատիրոջը ծանուցելու պահից: Ժան Շաբաթոն, զարգացնելով այս միտքը, նշում է, որ ուժի մեջ մտնելու պահը միաժամանակ իրավական պարտավորությունների և բողոքարկման մեխանիզմների մեկնարկային կետն է (Vedel, Marcel 1999):

Ռուս իրավական գրականությունում՝ մասնավորապես՝ Ալեքսանդր Պառշինի և Նիկոլայ Սալիշչևի աշխատություններում, գերակշռում է այն տեսակետը, համաձայն որի վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը պետք է պայմանավորվի դրա հասցեատիրոջ իրազեկմամբ: Ռուսաստանի Դաշնության Վարչական վարույթի դաշնային օրենքում (ՎՎՕ) ևս ամրագրված է ակտի ուժի մեջ մտնելը՝ հասցեատիրոջ ծանուցման պահից (Паршин 2007):

Համադրելով տարբեր իրավակարգերի գիտական դիրքորոշումները՝ կարող ենք եզրակացնել, որ արդի վարչական իրավունքում գերակշռում է այն մոտեցումը, ըստ որի վարչական ակտը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ այն պատշաճ ձևով դառնում է հասանելի իր հասցեատիրոջը: Այս մոտեցումը բխում է իրավական վստահության, պաշտպանության և վարչարարության թափանցիկության սկզբունքներից: Միևնույն ժամանակ, որոշ իրավակարգերում՝ հատկապես նորմատիվ ակտերի պարագայում, գերադասվում է հրապարակման պահը՝ որպես ուժի մեջ մտնելու սկիզբ:

Վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահի նշանակությունը դատական պաշտպանության իրավունքի տեսանկյունից

Վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահի հստակեցումը բացառիկ նշանակություն ունի դատական պաշտպանության իրավունքն արդյունավետ իրացնելու տեսանկյունից: Այս հարցը անմիջականորեն առնչվում է արդար դատաքննության իրավունքի, իրավական կանխատեսելիության և անձի պաշտպանված լինելու իրավունքի հիմնարար սկզբունքների հետ:

Իրավական որոշակիության և կանխատեսելիության ապահովում

Իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որ իրավունքի սուբյեկտները կարողանան հստակ գնահատել իրենց իրավական վիճակը, հետևաբար՝ պարզ լինի, թե որ պահից է վարչական ակտը առաջացնում իրավական հետևանքներ: Ուժի մեջ մտնելու պահի անորոշությունը կարող է հանգեցնել իրավունքի խախտումների, քանի որ անձը, հնարավոր է, տեղյակ չլինի իր հանդեպ ընդունված ակտից և ուշացումով դիմի բողոքարկման:

Հայ իրավագիտության մեջ այս խնդրին անդրադարձել է Դ. Հարությունյանը՝ ընդգծելով, որ վարչական ակտի հասցեատիրոջ իրավունքը՝ իրավական պաշտպանությանն ու բողոքարկմանը, սկսվում է միայն այն պահից, երբ ակտը հասու է դառնում վերջինիս: Արտասահմանյան փորձն այս առումով ևս վկայում է այն մասին, որ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը պայմանավորված է ակտի՝ ուժի մեջ մտնելու պահի հստակ և կանխատեսելի կարգավորմամբ, որը կարող ենք տեսնել Գերմանիայի վարչական վարույթի մասին օրենքի 43-րդ հոդվածով, Ֆրանսիայի վարչական օրենսդիր փորձը և այլն:

Բողոքարկման ժամկետների հաշվարկման հիմք

Վարչական ակտերի բողոքարկման ժամկետները օրենքով սահմանված են որպես վերջնաժամկետներ: Դրանց հաշվարկի ճիշտ մեկնարկը վճռորոշ է՝ դատական վարույթը ժամանակին սկսելու իրավունքը չկորցնելու համար: Եթե ակտը համարվում է ուժի մեջ մտած՝ ընդունման կամ ստորագրման պահից, առանց ծանուցման, ապա գործնականում հաճախ անհնարին կլինի շահագրգիռ անձի համար արդյունավետ բողոքարկում ներկայացնել:

Այդ պատճառով՝ ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան իրավունքում գերակայում է այն մոտեցումը, որ բողոքարկման ժամկետները սկսում են հաշվարկվել ոչ թե ակտի ընդունման, այլ հասցեատիրոջը ծանուցելու պահից:

Իրավունքի պաշտպանության իրական հնարավորության պայման

Դատական պաշտպանության իրավունքը ձևական իրավասություն չէ, այլ ենթադրում է գործնական և իրական հնարավորություն՝ դիմելու դատարան: Այդ հնարավորությունը խախտվում է, եթե անձը զրկվում է տեղեկացված լինելուց:

Հետևաբար՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը դառնում է հիմնական նախապայման՝ անձի պաշտպանական մեխանիզմներն ակտիվացնելու համար:

Եվրոպական դատարանի պրակտիկայում ևս (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Պելիսյե և Սասսի ընդդեմ Ֆրանսիայի» որոշմամբ (Դատական գործ, դիմում N 25444/94, 25 մարտ 1999թ.) 1999) շեշտվում է, որ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նաև փաստացի հնարավորություն նախապատրաստելու և ներկայացնելու դիրքորոշում՝ իրավական ակտի դեմ: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ ակտի հասցեատերը իրավազեկված է:

Համեմատական վերլուծություն և քննարկում

Վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահի հստակեցումը հանդիսանում է վարչարարության թափանցիկության, իրավական որոշակիության և արդար դատաքննության իրավունքի հիմքում ընկած կարևոր բաղադրիչներից: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրած արտասահմանյան մոդելներն իրենց կառուցվածքով և մեխանիզմներով առավել արդյունավետ կերպով են կարգավորում ակտի ուժի մեջ մտնելու պահը՝ ի տարբերություն ՀՀ գործող իրավակարգավորման:

Գերմանիայի և Ֆրանսիայի օրենսդրություններում վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը հստակ և միանշանակ կապվում է **ծանուցման կամ հրապարակման** հետ: Այս մոտեցումը տրամաբանական է և ծառայում է հասցեատիրոջ իրավունքների պաշտպանության նպատակին՝ միաժամանակ կանխելով վարչական կամայականությունը: Գերմանիայում այս պահը կոդիֆիկացված է օրենսգրքով (Գերմանիայի վարչական ընթացակարգի օրենքի 43 հոդված), մինչդեռ Ֆրանսիայում այն կիրառվում է հրապարակման ձևով՝ ըստ ակտի բնույթի:

Ի տարբերություն դրա, Հայաստանում բացակայում է իրավական ակտի ուժի մեջ մտնելու հստակ սահմանումը, իսկ «ծանուցման» ձևերն ու պահը հաճախ մեկնաբանվում են տարբեր կերպ՝ հանգեցնելով վարչական գործերի և բողոքարկումների իրավական անկայունությանը (Օրինակ՝ դատական պրակտիկայում վերը նշված դեպքով երկու տարբեր մոտեցումները՝ իրավական ակտի մասին տեղեկանալու պահից սկսած դատավարական ժամկետների հաշվարկը և իրավական ակտը հասցեատիրոջը հանձնելու պահից սկսած դատավարական ժամկետների հաշվարկը):

Լիտվայի օրինակը վկայում է, որ **թվայնացված ծանուցման համակարգի ներդրումը** և ակտերի արձանագրման ավտոմատացումն ապահովում է իրավական հստակություն՝ խուսափելով վեճերից՝ կապված «ծանուցման պահի» հետ: Այս համակարգը կիրառելի կարող է լինել նաև Հայաստանի համար՝ հատկապես հաշվի առնելով ՀՀ-ում իրականացվող թվայնացման քաղաքականությունը և իրավական փաստաթղթաշրջանառության միտումները:

Բոլոր վերը նշված երկրներում ակտի ուժի մեջ մտնելը սերտորեն կապված է **տեղեկացված լինելու իրավունքին**: Այսինքն՝ անհատի իրավունքների և պարտավորությունների ծագումը ենթակա է ոչ միայն իրավական հիմքի, այլև փաստացի տեղեկացման: ՀՀ-ում, հակառակը, որոշ վարչական մարմիններ գործնականում մեկնաբանում են, որ ակտն ուժի մեջ է մտնում դեռևս ընդունման պահից՝ անկախ ծանուցումից: Սա ոչ միայն ստեղծում է իրավական անորոշություն, այլև լրջորեն վտանգում է քաղաքացու իրավունքի արդյունավետ իրացումը:

Հայաստանի համար առավել կիրառելի է համարվում **գերմանական մոդելը**, քանի որ այն հստակ իրավական հիմք է ստեղծում վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահի համար՝ միաժամանակ պահպանելով ծանուցման պարտադիր սկզբունքը: Սակայն թվայնացման տեսանկյունից նաև **Լիտվայի փորձը** կարող է կիրառելի լինել՝ հաշվի առնելով թվային կառավարման աստիճանաբար զարգացող համակարգերը ՀՀ-ում:

Եզրահանգումներ

Վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահի հստակեցումը կարևորագույն նախապայման է վարչարարության իրավաչափության, կանխատեսելիության և վստահության սկզբունքի ապահովման համար: Հայաստանում գործող վարչական դատավարության իրավակարգավորումը լիարժեքորեն չի լուծում ակտի ուժի մեջ մտնելու պահի սահմանման և իրավական հետևանքների կառավարման հիմնախնդիրը: Այս բացը հանգեցնում է ոչ միայն պրակտիկ դժվարությունների, այլև՝ իրավունքի խախտման ռիսկերի:

Համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ՝

- Գերմանիայում վարչական ակտը իրավաբանական ուժ է ստանում բացառապես ծանուցման պահից:
- Ֆրանսիայում ակտի ուժի մեջ մտնելը կախված է նրա բնույթից՝ հրապարակման կամ անհատական ծանուցման միջոցով:

- Լիտվայում բարձր արդյունավետություն է ցուցաբերում թվայնացված ծանուցման համակարգը՝ ակտերի ուժի մեջ մտնելու պահի փաստացի վավերացման միջոցով:
- Հայաստանում կիրառվող ոչ միանշանակ մոտեցումը, երբեմն՝ ակտի ընդունման պահից բխող իրավական հետևանքներով, հակասում է իրավունքի գերակայության, կանխատեսելիության և արդյունավետ պաշտպանության սկզբունքներին:

Առաջարկություններ

1. **Վարչական դատավարության օրենսգրքի համալրում**. առաջարկվում է ՎԴՕ-ում ներմուծել հստակ դրույթներ, որոնք կսահմանեն, որ վարչական ակտը ուժի մեջ է մտնում միայն այն պահին, երբ պատշաճ կերպով ծանուցվել է հասցեատիրոջը: Դատավարական ժամկետի հաշվարկը պետք է իրականացվի վարչական ակտը ստանալու պահից սկսած, այլ ոչ թե այն իրազեկվելու պահից:Վարչական ակտի մասին տեղեկանալը չի կրում զուտ այդ ակտի գոյության մասին տեղեկանալու բնույթ, այլ պայմանավորված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների համաձայն վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելու և դրա ուժի մեջ մտնելու հետ: Վարչական ակտն օրինական ուժի մեջ է մտնում դրա հասցեատիրոջն այդ վարչական ակտի մասին ծանուցելու հաջորդ օրը, որից հետո սկսում է հոսել այդ վարչական ակտի բողոքարկման համար սահմանված դատավարական ժամկետը: Հայցվորը վարչական ակտի գոյության մասին տեղեկանալու հիմքով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու պարտավորություն չունի: Վարչական ակտի մասին տեղեկանալը ինքնին չի նշանակում, որ այն ուժի մեջ է մտել:
2. **Ծանուցման ձևերի կարգավորում.** անհրաժեշտ է սահմանել ծանուցման ընդունելի ձևերը՝ ներառյալ էլեկտրոնային, փոստային, առձեռն և այլն՝ օրենքով ամրագրված մեխանիզմներով:
3. **Թվայնացված ծանուցման համակարգի ներդրում.** Նպատակահարմար է ստեղծել միասնական էլեկտրոնային հարթակ, որտեղ կգրանցվեն վարչական ակտերը և դրանց ծանուցման փաստերը՝ իրավական ուժի մեջ մտնելու պահի ստույգ վավերացման համար:
4. **Դատական պրակտիկայի միատեսակեցում.** Անհրաժեշտ է Վճռաբեկ դատարանի կամ բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակել ուղեցույցներ՝ վարչական ակտերի ուժի մեջ մտնելու հարցում միատեսակ մեկնաբանության ապահովման համար:
5. **Վարչական մարմինների վերապատրաստում.** Ցանկալի է պետական մարմինների իրավաբանական ստորաբաժանումների համար կազմակերպել մասնագիտացված վերապատրաստումներ՝ ծանուցման և ուժի մեջ մտնելու իրավաչափ կիրառման վերաբերյալ:

Այս բարեփոխումները կնպաստեն վարչական իրավունքի ոլորտում իրավական կանխատեսելիության բարձրացմանը, քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովմանը և վարչական արդարադատության համակարգի ամրապնդմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադամյան, Սեդա. Վարչական վերաքննիչ ընթացակարգը և դրա արդյունավետության նախադրյալները ՀՀ վարչական դատավարությունում. Երևան, ԵՊՀ հրատ., 2022:

2. Դանիելյան, Գևորգ. Վարչական վարույթ և դատավարություն. Երևան, Տիգրան Մեծ, 2011, էջ 92–96:
3. Դատալեքս, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809979568: Մուտք՝ 14.05.2025 թ.:
4. Հարությունյան, Դավիթ. «Վարչական ակտի ուժի մեջ մտնելու հիմնախնդիրը վարչական դատավարական իրավունքում»: Իրավագիտություն, հ. 2, 2017, էջ 45–56:
5. Հարությունյան, Գագիկ., Խունդկարյան, Երվանդ. Վարչական իրավունք. Առաջինմաս.Երևան,Լուսաբաց, 2015:
6. Թովմասյան, Հրայր., Լուխթերհանդթ, Օլաֆ., Մուրադյան, Գուրգեն., Պողոսյան, Վիգեն., Ռայմերս, Վոլֆգանգ., Ռուզել, Ռենատ. ՀՀ ընդհանուր վարչական իրավունք. Ուսումնական ձեռնարկ.Երևան՝ Բավիղ, 2011, էջ 258:
7. ՀՀ Ազգային Ժողով. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք. Երևան, 2007, փոփոխություններով մինչև 2024 թվականը:
8. ---. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, Երևան:
9. ՀՀ Վճռաբեկ Դատարան. Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիբալթյանի թիվ ՎԴ/2499/05/14 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը:
10. Салыщев, Н.Г. Вопросы теории и практики административного права. М.: Юридическая литература, 1997.
11. Паршин, А.А. Административное право России. М.: Норма, 2007.
12. Delvolvé, P.Droit administratif. Dalloz, Paris, 2019.
13. Shabano, Zh., Chapus, R. Le droit administratif français. Paris, Montchrestien, 2004.
14. Vedel, M. Les actes administratifs unilatéraux.Paris, PUF, 1999.
15. Verwaltungsverfahrensgesetz (VwVfG). Fassung von 2023.
16. Schmidt, B. Verwaltungsrecht. Heidelberg, Springer, 2013, 6. Auflage.
17. Maurer, H.Allgemeines Verwaltungsrecht.Munich, C.H. Beck, 2011.

WORKS CITED

1. Adamyan, Seda. (2022). Varchakan verakhnich’ ent’ats’kargy ev dra ardyunavetut’yan nakhadryalnery HH varchakan datavarut’yunum [The Administrative Appeal Procedure and Its Preconditions for Effectiveness in the Administrative Proceedings of the Republic of Armenia] (Yerevan: YSU Publishing House) (in Armenian).
2. Danielyan, Gevorg. (2011). Varchakanvaruyt’ yev datavarut’yun [Administrative Proceedings and Litigation] (Yerevan: Tigran Mets Publishing) (in Armenian).
3. Harutyunyan, Davit. (2017). Varchakan akti uzhi mej mtnelu himnakhndiry varchakan datavarakan iravunk’um [The Issue of Entry into Force of an Administrative Act in Administrative Procedural Law], Iravagitut’yun [Legal Science], no. 2, pp. 45–56 (in Armenian).
4. Harutyunyan, Gagik., Khundkaryan, Yervand. (2015). Varchakan iravunk’. Arrajin mas [Administrative Law: Part One] (Yerevan: Lusabats Publishing) (in Armenian).
5. Parshin, A. A. (2007). Administrativnoe pravo Rossii [Administrative Law of Russia] (Moscow: Norma Publishing) (in Russian).
6. Salishchev, N. G. (1997). Voprosy teorii I praktiki administrativnogo prava [The Issues of Theory and Practice of Administrative Law] (Moscow: Legal Literature Publishing) (in Russian).

7. T'ovmasyan, Hrayr., Lowxt'erhandt', O'laf., Mowradyan, Gowrgen., Poghosyan, Vigen., R'aymers, Volfgang., R'owzel, R'enat. HH y'ndhanur varchakan iravunq. Usumnakan d'er'nark [*General Administrative Law of the Republic of Armenia: Educational Manual*]. Erevan՝ Bavigh, 2011, e'j 258. (in Armenian).

8. HH Azgayin Zhoghov, Hayastani Hanrapetut'yan Varchakan Datavarut'yan Orensgirq' [Code of Administrative Procedure of the Republic of Armenia] (2007, amended to 2024) (in Armenian).

9. HH Azgayin Zhoghov, Hayastani Hanrapetut'yan orenq "Varchararanut'yan himunk'neri yev varchakan varuyt'I masin" [Law of the Republic of Armenia on Fundamentals of Administration and Administrative Proceedings] (Armenian).

10. HH Vchrabek dataran, Yerevani k'aghak'apetarann enddem Armenuhi Dalibaltyani t'iv VD/2499/05/14 varchakangortsov HH vch'rabek dataranni 10.12.2014 t'. voroshumy [Judgment in the Case of Yerevan Municipality v. Armenuhi Dalibaltian, No. VD/2499/05/14, 10 December 2014] (in Armenian).

11. Judicial act. Available on the Datalex Judicial Information System: https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809979568 (accessed May 14, 2025).

THE MAIN PROBLEMS OF ENTRY INTO FORCE OF AN ADMINISTRATIVE ACT IN THE CURRENT ADMINISTRATIVE JUDICIAL PROCEEDINGS AND THEIR POSSIBLE SOLUTIONS

ARKADI HOVHANNISYAN
Law Firm «GAH Partners», Chief Legal Advisor-Attorney;
of Goris State University, Advisor to the Rector;
Faculty of Humanities, Department of Philology and Historical Law, Lecturer
Sisian, the Republic of Armenia

The purpose of the article is to present the legal issues of the entry into force of an administrative act in the Republic of Armenia and compare them with the regulations of some foreign legal systems, suggesting possible ways of reform.

To achieve the goal set, the following tasks were set: to identify the lack of clarity in the legislation of Armenia concerning the moment an administrative act enters into force – a problem that has emerged in judicial practice; to compare relevant foreign experience; and to propose reforms in this area.

During the study, the forms of notification of an administrative act and the absence of a clear moment of its entry into force in our legislation were disputed, accordingly, within the framework of the legal issues identified, the following questions were raised:

1. What gaps and advantages do the systems have?
2. What can be used to improve the legislation of the Republic of Armenia?

The research methodology during the work is based on the study of dogmatic legal analysis, comparative jurisprudence and judicial practice.

Summing up the study, we came to the conclusion that:

1. In Armenia, there is still no clarity about the moment of entry into force of an act, which may harm legal predictability and the protection of citizens.
2. Germany and France have clear legal regulations that provide clear and predictable mechanisms for the entry into force of an act.
3. Lithuania, being a member of the EU, has developed digitalized administration mechanisms, where electronic notification has full legal force.

Keywords: *administrative act, addressee of an administrative act, entry into force of an administrative act, clarity, electronic notification, informing about the existence of an administrative act, procedural deadlines, notification of an administrative act, handing over an administrative act.*

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ВСТУПЛЕНИЯ В ЗАКОННУЮ СИЛУ АДМИНИСТРАТИВНОГО АКТА В СОВРЕМЕННОМ АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ И ВОЗМОЖНЫЕ ПУТИ ИХ РЕШЕНИЯ

АРКАДИЙ ОГАННИСЯН
преподаватель кафедры филологии и исторического права гуманитарного факультета, советник ректора Горисского государственного университета, главный юрисконсульт-адвокат юридической фирмы «ГАА Партнерс», г. Сисиан, Республика Армения

Целью статьи является представление правовых вопросов вступления в силу административного акта в Республике Армения, сравнение с нормами некоторых зарубежных правовых систем и предложения по возможным путям реформирования этого процесса.

Для достижения цели мы поставили перед собой следующие задачи: выявить неясности в законодательстве Армении относительно момента вступления административного акта в силу, поскольку такая проблема возникла в судебной практике, сравнить зарубежный опыт и предложить реформы в этой сфере.

В ходе исследования были оспорены формы уведомления об административном акте и отсутствие четких условий для этого в нашем законодательстве, поэтому в рамках затронутых правовых проблем были поставлены следующие вопросы:

1. Какие недостатки и преимущества есть у систем?
2. Что можно использовать для совершенствования законодательства Республики Армения?

Методология исследования, использованная в работе, основана на догматико-правовом анализе, сравнительном правоведении и изучении судебной практики.

Подводя итоги исследования, мы приходим к выводу о том, что:

1. в Армении до сих пор нет ясности относительно момента вступления акта в силу, что может нанести ущерб правовой предсказуемости и защите граждан;
2. в Германии и Франции действуют четкие правовые нормы, которые обеспечивают понятные и предсказуемые механизмы вступления закона в силу;
3. Литва, являясь членом ЕС, разработала цифровые механизмы администрирования, где электронное уведомление имеет полную юридическую силу.

Ключевые слова: *административный акт, адресат административного акта, вступление административного акта в силу, однозначность, электронное уведомление, информирование о наличии административного акта, процессуальные сроки, уведомление об административном акте, вручение административного акта.*